ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

14.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 գնման պայմանագրի

ք. Երևան 06. ապրիլի 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Նորաշեն>> ՆՏ ԱԿ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Բաղդասարյանի և <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Ավագյանի (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կատարող), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 29.08.2019թ. կնքված համատեղ գործունեության համաձայնագրի հիման վրա, մյուս կողմից, (Պատվիրատուն և Կատարողը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 19.03.2020թ. N 347-Ն որոշումը և ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 14.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրում և Պայմանագրի բոլոր հավելվածներում <<ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի վերակառուցում>> բառերը փոխարինել <<ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցում>> բառերով.

բ) Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամկետն ավելացնել 30 օրացուցային օրով, որի հաշվարկը սկսվում է Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից.

գ) Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027688
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝

<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Բաղյան փող. 1-ին նրբ.6/6
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 16351801154 5
ՀՎՀՀ 00883641

Տնօրեն՝

_____ Գ. Ավագյան
(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված
14.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 պայմանագրի
.06. ապրիլի 2020թ. կնքված N1 համաձայնագրի

<<Հավելված N 2
14.10.2019թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/19 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ Արարտի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

ՀՀ դրամ

	Աշխատանքի																		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019-2020 թթ.՝ ըստ ամիսների,այդ թվում՝																
			2019 թ.				2020 թ.												
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**	**Ընդամենը 2019-2020 թթ.**
1	71241200/83	ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ	6 895 200	6 895 200	6 895 200	6 895 200	-	-	-	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	20 685 600	**27 580 800**

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով յուրաքանչյուր տարվա համար:>>

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027688
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ
ՀՀ ք. Երևան, Հալաբյան փող. 11-36
<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 24144000617900
ՀՎՀՀ 01203702

Տնօրեն՝

_____ Գ. Բաղդասարյան
(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Բաղյան փող. 1-ին նրբ.6/6
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163518011545
ՀՎՀՀ 00883641

Տնօրեն՝

_____ Գ. Ավագյան
(ստորագրություն) Կ.Տ.